

## ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՊՈՂՈՍ Զ ՊԱՊԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

### ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ ԿԱՐԴԻՆԱԼ ԿԱՐԼՈ ԿՈՆՖԱԼՈՆԻԵՐԻՆ՝ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԿԱՐԴԻՆԱԼԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

**Վատիկան—Հռոմ**

Հայաստանյայց առաքելական եկեղեցին, անխառն զգացումներով մասնակցում է ձեր մեծ եկեղեցու սուգին և աղոթում, որ հանգուցյալ Պողոս Զ Սրբազան Պապի հոգին, բարին Աստված քաղցրությամբ ընդունի հավիտենական լույսերի ափին և սուրբ պահի նրա հիշատակը, որ մեր փոթորկալից ժամանակների մարդկության վիշտը իր սրտում և Քրիստոսի խաչը իր ուսերին առած աշխարհին տևապես բաշխեց սեր և հույս, խաղաղություն և հաճություն ի մարդիկ։

Սուրբ Էջմիածնից օրհնություն Պողոս Զ Պապի քրիստոսանվեր վաստակին։

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
10 օգոստոս 1978 թ.